— Դու կը մրսես, Ֆարհատ, այստեղ ցուրտ է լինում. ես տանից քեզ համար քնելու շորեր կ'ուղարկեմ:

Գիշերային մթութեան մէջ ոչ ոք չնկատեց մեր խօսակցութիւնը, ես շնորհակալութիւն արեցի օրիորդին նրա բարեսրտութեան համար, եւ յայտնեցի՝ թէ ես փոքր-ինչ սովորած եմ առանց ծածկոցի եւս քնել, որովհետեւ մեր տանում երբեք անկողին չեմ ունեցել, իմ վերմակը եղել է հօրս մաշած վերարկուն, իսկ դօշակս՝ սառն հասիրը:

— Դու ղօչաղ տղայ ես, Ֆարհատ, դու չես մրսի, — ասաց նա ուրախ ձայնով, եւ իր ձեռքով մի թեթեւ զարկ տալով իմ ուսին, փախաւ ինձանից, երբ երկրորդ անգամ խաւարի միջից լսելի եղաւ ծերունի որսորդի ձայնը.

— Ու՞ր ես, Մարօ, գնա՛նք, բալաս:

Հասօն իսկոյն վառեց ահագին խարոյկ տաղաւարի առջեւ, չոր փայտերը բորբոքեցան, եւ լոյսը տարածուեցաւ հեռու մեր շրջակայքում: Այն ժամանակ միայն կարողացայ լաւ տեսնել վաղեմի ընկերիս — Հասօի — վերանորոգած կերպարանքը, որը վարժատան կեանքից յետոյ այնքան շատ փոփոխութիւնների էր ենթարկուել: Մաշուած եւ ուժից ընկած «էշի փալանը», — որպէս կոչում էին նրան — այժմ առողջ եւ խիստ ժիր տղայ էր դարձել: Ահա՛ ի՞նչ է նշանակում տէրտէրի այբ-բենը եւ երկրագործութիւնը... առաջինը մաշեց տրորեց նրա մանկութիւնը, առանց որեւիցէ մտաւոր սնունդ տալու նրա գլխին... իսկ վերջինը վերանորոգեց նրա սպառուած ուժերը եւ լեցրուց ծերունի հօր տունը հացով...:

Իսկ այս կոշտ-կոպիտ մշակի մէջ չէին երեւում ոչ հօր բարեսրտութիւնը եւ ոչ քրոջ աշխուժութիւնը: Հասօն, եթէ կարելի է այսպէս կոչել, խստասիրտ եւ մռայլոտ արարածներից մէկն էր: Բոլոր ժամանակը նա մի քանի անգամ միայն խօսեց ինձ հետ, եւ նրա խօսքերը խիստ կարճ եւ անգոյն էին: Սագօն խիստ ճշտութեամբ նկատեց՝ թէ «Հասօն քաղցրախօս է միայն իր եզների հետ, որոնք նրա արօրը քաշում են»: Այսոամենայնիւ, ես միշտ համակրութեամբ էի վարւում նրա հետ, որովհետեւ նա Մարօի եղբայրն էր...

Գիւղը շատ հեռու չէր ագարակից, մենք շուտով ստացանք ծերունի որսորդի խոստացած պաշարը՝ առատ գինի եւ հաց: Ղաբանի մսից պատրաստուած խորովածները արդէն եփուած էին, իսկոյն կազմուեցաւ ընթրեքի սեղանը: Տղերքը չափազանց սոված լինելով, նստեցին ուտելու. ես հրաժարուեցայ սեղանից, յայտնելով, թէ ախորժակ չունիմ եւ ինձ ոչ այնքան առողջ եմ զգում: Եւ իրաւ, գլուխս սաստիկ ցաւում էր, եւ ճանապարհի անախորժ անցքից յետոյ ես գտնուում էի մի տենդային գրգռման մէջ, որ գնալով, աւելի եւ